

14.04.2011թ.

գ. Լուսակունք

Հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 2011թ. հունվարի 21-ի թիվ 5-Ա կարգադրությունը հանձնաժողովը՝ նախագահությամբ մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Ի. Ասատրյանի, անդամությամբ՝ աշխատակազմի քարտուղարության պետ Յու. Թաթարյանի, աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետի տեղակալ Ա. Գասպարյանի, նույն վարչության ՀԳՄՏՄԳՀ բաժնի վարիչ Հ. Օհանյանի, աշխատակազմի զարգացման ծրագրերի բաժնի վարիչ Վ. Մնացականյանի, աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ Վ. Պողոսյանի վարչական վերահսկողության շրջանակներում ուսումնասիրեց մարզի Լուսակունք համայնքի ղեկավարի /Խաչիկ Խաչատրյան/ և ավագանու գործունեությունը 2009-2011թթ: Ուսումնասիրությանը մասնակից դարձվեց նաև աշխատակազմի հողաշինարարության և հողօգտագործման բաժնի մասնագետ Ա. Զարոյանը: Ուսումնասիրությունից պարզվեց հետևյալը՝

1. Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը իրավական ակտերի ընդունման բնագավառում

Համայնքի ավագանին 2009թ. գումարել է 5 նիստ, ընդունել է 18 որոշումներ:

2010թ. գումարել է 6 նիստ, ընդունել է 25 որոշումներ, 2011թ. անցած 3 ամիսների ընթացքում գումարել է 3 նիստ, ընդունել է 12 որոշումներ:

Համայնքի ղեկավարը 2009թ. ընդունել է 19, 2010թ.՝ 13, 2011թ. անցած ժամանակահատվածում 8 որոշումներ: Համայնքի ղեկավարը 2009թ. արձակել է 32, 2010թ.՝ 49, 2011թ.՝ 11 կարգադրություններ: Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարը 2009թ. արձակել է 3, 2010թ.-18, 2011թ. անցած ժամանակահատվածում 2 հրամաններ:

Պետք է նշել, որ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված իրավական ակտերը հիմնականում իրենց կառուցվածքով, իրավական տեխնիկայի կանոնների կիրառմամբ վերնագրերով և ժամկետայնությամբ համապատասխանում են «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

Սակայն 2009թ. ավագանու նիստերի գումարման ժամանակ խախտվել է նիստերի հրավիրման պարբերականությունը, այսպես՝ ավագանու թիվ 4 նիստը հրավիրվել է 10.07.2009թ., իսկ թիվ 5 նիստը կայացել է 10.12.2009թ., որով չի պահպանվել ՀՀ «ՏԻՄ» օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ պարբերության պահանջը, այն է՝ նիստեր գումարել ոչ ուշ քան 2 ամիսը մեկ:

Համայնքի ավագանին 2009թ. բյուջեն հաստատել է 09.01.2009թ. թիվ 1 նիստում, նույն նիստում քննարկվել և հաստատվել է նաև համայնքի 2009-2012թթ. զարգացման ծրագիրը:

15.12.2009թ. թիվ 5 նիստում թիվ 16 որոշմամբ հաստատվել է 2010թ. տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը, իսկ նույն նիստի թիվ 17 որոշմամբ հաստատվել է 2010թ. համայնքի ղեկավարի աշխատակազմի և ենթակառուցների հաստիքացուցակը և դրույքաչափերը՝ 13 միավոր՝ որից 6-ը համայնքի ղեկավարի աշխատակազմում, 5 միավոր մշակույթի պալատի աշխատողներ, 2-ը գրադարանի աշխատողներ:

15.01.2010թ. թիվ 1 նիստի 1 որոշմամբ հաստատվել է 2010թ. համայնքի բյուջեն, նույն նիստի թիվ 2 որոշմամբ վերանայվել և վերահաստատվել է համայնքի զարգացման 2003-2012թթ. ծրագիրը: 19.03.2010թ. թիվ 2 նիստի թիվ 16 որոշմամբ 60000 դրամ է հատկացվել դպրոցի 10-րդ դասարանցիների վերջին զանգի միջոցառման կազմակերպման համար, իսկ թիվ 17 որոշմամբ 240000 դրամ է հատկացվել մայիսի 9-ի Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի և Շուշիի ազատագրման տարելիցի կապակցությամբ համայնքում միջոցառումներ և նվերներ տրամադրելու համար:

19.07.2010թ. թիվ 4 նիստի թիվ 20 որոշմամբ ավագանին որոշել է համայնքի հաշվեկշռում գտնվող 150 գծամետր բետոնյա պատերը համայնքի գերեզմանոցի ցանկապատի համար օգտագործելու:

28.12.2010թ. թիվ 6 նիստի թիվ 23 որոշմամբ հաստատվել է 2011թ. տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը, թիվ 24 որոշմամբ հաստատվել է գյուղապետի աշխատակազմի և ենթակառուցների հաստիքացուցակը և դրույքաչափերը, սահմանվել է 14 հաստիք, որից մշակույթի պալատին՝ 4 միավոր, գրադարանին՝ 2 միավոր, գյուղապետին՝ 8 միավոր: Նույն նիստի թիվ 25 որոշմամբ լսվել և հաստատվել է համայնքի բյուջեի 2010թ. տարեկան հաշվետվությունը, միաժամանակ քննարկվել է 2011թ. բյուջեի նախագիծը:

2011թ. բյուջեն հաստատվել է 27.01.2011թ. թիվ 1 նիստի թիվ 1-Ն որոշմամբ /եկամտային մասը՝ 24956.0 հազար դրամ, ծախսային մասը՝ 24956.0 հազար դրամ/:

14.03.2011թ. ավագանու թիվ 2 նիստի թիվ 7 որոշմամբ փոփոխություններ են կատարվել ավագանու 27.01.2011թ. թիվ 1-Ն որոշման մեջ, այն է՝ համայնքի 2011թ. բյուջեի մեջ: 28.03.2011թ. թիվ 3 նիստի թիվ 9 որոշմամբ վերանայվել է համայնքի զարգացման ծրագրում:

Հանձնարարվեց համայնքի ղեկավարին պահպանել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջը այն է՝ ավագանու որոշումները առաքել մարզպետարան յոթնօրյա ժամկետում:

Նորմատիվ իրավական ակտերը՝ /բացի 2011թ. համայնքի բյուջեից/

- տեղական տուրքերի դրույքաչափերը
- բյուջեում կատարվող փոփոխությունները
- համայնքի զարգացման ծրագիրը
- ավագանու կանոնակարգը
- առևտրի, հասարակական սննդի, սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնները և այլն չեն ներկայացվել պետական լիազորված մարմնին՝ ի դեմս ՀՀ արդարադատության նախարարություն, պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման, որով իսկ չեն

կատարվել <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի պահանջները:

Համայնքի ղեկավարի 30.12.2009թ. թիվ 30 կարգադրությամբ գույքագրման հանձնաժողովը գյուղապետի 14.01.2009թ. թիվ 2-Ա որոշմամբ հաստատվել է համայնքի ղեկավարի աշխատակազմի կանոնադրությունը, իսկ 01.04.2009թ. թիվ 5-Ա որոշմամբ հաստատվել է աշխատակազմի աշխատանքային կարգապահության ներքին կանոնները: 30.12.2009թ. թիվ 18-Ա որոշմամբ հաստատվել է համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից քաղաքացիների ընդունելության կարգը:

07.06.2010թ. թիվ 11-Ա որոշմամբ ստեղծվել է քաղաքացիական պաշտպանության կազմավորում:

10.12.2010թ. գյուղապետի թիվ 13-Ա որոշմամբ ստեղծվել է համայնքի գույքագրման հանձնաժողով:

31.03.2011թ. թիվ 7-Ա որոշմամբ ստեղծվել է 2011թ. հնարավոր հեղեղումների, սելավների և դրանց կանխարգելման ու հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման միջոցներ իրականացնելու համար հանձնաժողով:

2. Համայնքային ծառայության և գործավարության բնագավառ

ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006թ. նոյեմբերի 21-ի <<<< Գեղարքունիքի մարզի Լուսակունք գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմը համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին>> թիվ 205-Ա հրամանով /հավելված 38/ սահմանվել են ներքոհիշյալ պաշտոնները

1/ աշխատակազմի քարտուղար /ծածկագիր՝ 1.2-1/

2/ աշխատակազմի գլխավոր մասնագետ /ծածկագիր՝ 2.3-1/

3/ աշխատակազմի գլխավոր մասնագետ /ծածկագիր՝ 2.3-2/

4/ աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ /ծածկագիր՝ 3.2-1/

5/ աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ /ծածկագիր՝ 3.3-1/

Աշխատակազմի գլխավոր մասնագետի /~~ծածկագիր՝ 2.3-1/ պաշտոնը~~ թափուր է սկսած 25.09.2009թ. /չնայած տրվել են մրցույթի համապատասխան հայտարարություններ, մրցույթները չեն կայացել դիմումներ չլինելու պատճառով, միաժամանակ տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար գյուղապետը դիմել է նաև պետական լիազոր մարմին կադրերի ռեզերվից համալրելու խնդրանքով/: Այնուհանդերձ խորհուրդ է տրվում ավագանու նիստում քննարկել տվյալ պաշտոնի պահելու նպատակահարմարության հարցը և սահմանված կարգով դիմելու պետական լիազորված մարմնին համայնքային ծառայության անվանացանկում անհրաժեշտ փոփոխություն կատարելու խնդրանքով:

05.02.2007թ. գյուղապետի թիվ 2 որոշմամբ հաստատվել են համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերը, իսկ 06.02.2007թ. թիվ 3 որոշմամբ համայնքային ծառայողները նշանակվել են պաշտոնների:

22.08.2007թ. թիվ 11 որոշմամբ հաստատվել է համայնքային ծառայողների մրցութային և ատեստավորման հանձնաժողովի անհատական կազմը: 21.08.2007թ. թիվ 9 որոշմամբ աշխատակազմի քարտուղարի

պարտականությունների կատարումը ժամանակավորապես դրվել է գլխավոր մասնագետ ժորա Թադևոսյանի վրա, քարտուղարը պաշտոնից ազատվել է, իր դիմումի համաձայն, գլխավոր մասնագետը այդ պարտականությունը կատարել է մինչև 13.11.2008թ. /մոտ 1 տարի 3 ամիս/: Փաստորեն համայնքի ղեկավարի /նախկին գյուղապետ Է. Օհանյան/ կողմից խախտվել է <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին կետի պահանջը:

13.11.2008թ. թիվ 10, թիվ 11, թիվ 13 որոշումներով գյուղապետ Է. Օհանյանը իրենց դիմումների համաձայն պաշտոններից ազատել է աշխատակազմի քարտուղարին, գլխավոր մասնագետին և 1-ին կարգի մասնագետին: Մինչ այդ 01.12.2007թ. պաշտոնից ազատվել է նաև մյուս գլխավոր մասնագետը /4 թափուր պաշտոն/: Նորընտիր գյուղապետի 14.11.2008թ. թիվ 15 որոշմամբ աշխատակազմի քարտուղար է նշանակվել Ս. Սաֆարյանը թիվ 16 որոշմամբ գլխավոր մասնագետ հաշվապահ ժամանակավոր պաշտոնակատար է նշանակվել Ա. Առաքելյանը /ծածկագիր՝ 2.3-1/, թիվ 17 որոշմամբ գլխավոր մասնագետ ֆինանսիստ ժամանակավոր պաշտոնակատար է նշանակվել Մ. Սարգսյանը, թիվ 18 որոշմամբ 1-ին կարգի մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար է նշանակվել Թ. Մուրադյանը թիվ 19 որոշմամբ 2-րդ կարգի մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար է նշանակվել Ռ. Գասպարյանը: Նորից համայնքային ծառայության թափուր ^{պաշտոնի} համալրումը ~~չի~~ ^{չի} իրականացվել <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով:

Համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերը նոր խմբագրությամբ հաստատվել է 20.02.2009թ. թիվ 4-Ա որոշմամբ:

07.09.2009թ. թիվ 7-Ա որոշմամբ գյուղապետը հաստատել է համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի անհատական կազմը, իսկ նույն օրը թիվ 8-Ա որոշմամբ հաստատվել են մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը: Համայնքի ղեկավարը հաշվի առնելով, որ խախտվել է <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքը իր 30.09.2009թ. թիվ 9-Ա, 10-Ա, 11-Ա, 12-Ա որոշումներով լուծել է 14.11.2008թ. աշխատակազմի քարտուղար Ս. Սաֆարյանի, գլխավոր մասնագետ Մ. Մարգարյանի, 2-րդ կարգի մասնագետ Ռ. Գասպարյանի, 1-ին կարգի մասնագետ Թ. Մուրադյանի հետ կնքված ժամկետային աշխատանքային պայմանագրերը:

30.09.2009թ. տեղի ունեցած մրցույթում քարտուղարի պաշտոնին, 3 ամիս փորձաշրջանով, նշանակվել է մրցույթում հաղթած Հ. Պետրոսյանին, որին սահմանված կարգով և ժամկետում՝ 11.01.2010թ. թիվ 1 որոշմամբ շնորհվել է ՀՀ համայնքային ծառայության 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան: Գյուղապետի 23.03.2010թ. թիվ 5-Ա որոշմամբ զորակոչի և զորահավաքի հետ կապված փոփոխություններ և լրացումներ են կատարվել աշխատակազմի քարտուղարի և 1-ին կարգի մասնագետի պաշտոնների անձնագրերում:

30.09.2009թ. աշխատակազմի քարտուղարի թիվ 1 հրամանով մրցույթում հաղթող ճանաչված Մ. Խաչատրյանը նշանակվել է 2-րդ կարգի մասնագետի պաշտոնում, իսկ Թ. Մուրադյանը 1-ին կարգի ^{պաշտոնում} պաշտոնում: Նրանց 3 ամիս փորձաշրջանը ավարտելուց հետո սահմանված եռօրյա ժամկետում շնորհվել են դասային աստիճաններ՝ 11.01.2010թ. թիվ 3 և թիվ 4 հրամաններով:

Գործավարության ուսումնասիրությունից պարզվեց, որ գյուղապետի աշխատակազմը քաղաքացիներից ստացել է դիմումներ՝

2009թ. – 38 /հիմնականում օգնության և հասցեների փոխելու խնդրանքով/
2010թ. – 49

2011թ. անցած 3 ամիսներին 12-ը:

Վերադաս և այլ կազմակերպություններից համայնք են մուտքագրվել գրություններ և այլ թղթակցություններ՝

2009թ. - 50

2010թ. - 49

2011թ. - 22

Համայնքից ելքագրվել են գրություններ, տեղեկանքներ և այլ փաստաթղթեր՝

2009թ. – 102

2010թ. – 106

2011թ. – 36

3. Համայնքի սոցիալ-տնտեսական կազմը և ենթակառուցյունները

Համայնքը ունի՝

մշակույթի տուն, աշխատում են 4 մարդ

գրադարան մոտ 4000 անուն գրականություն, աշխատում են 2 մարդ

կա բուժ ամբուլատորիա

խանութներ – 3 միավոր

կրպակներ- 2 միավոր

Մշակույթի տունը հիմնանորոգված է :

Միջհամայնքային ճանապարհներից հիմնավորոգված է Մարտունի-Վարդենիս, հանրապետական նշանակության ճանապարհից Լուսակունք-Խաչաղբյուր ճանապարհը ասֆալտապատված է:

Համայնքը դեռևս չունի առևտրի հասարակական սննդի, սպասարկման ոլորտի գործունեության համակարգման ներհամայնքային կանոնները:

Համայնքի բնակչությունը հիմնականում զբաղված է անասնապահությամբ, հողագործությամբ, մեղվապահությամբ, մի մասն էլ աշխատում են համայնքային և պետական կազմակերպություններում:

Համայնքի տնտեսությունների թիվ է 499-ը, բնակչությունը՝ 1623, որոնցից գյուղում մշտապես բնակվում են՝ 1533-ը, ժամանակավորապես բացակայում են 90 մարդ, իսկ երկարատև բացակա են 38-ը: Բնակչությունից 800 զբաղված են, որից 680-ը գյուղատնտեսական աշխատանքներում, այլ բնույթի աշխատողներ են 119-ը:

Համայնքում առկա է 960 խոշոր, 940 մանր եղջերավոր անասուններ, 73 խոզեր, 920 թև թռչուններ և 5144 մեղվաընտանիքներ:

4. Հողաշինության և հողօգտագործման բնագավառ

Գեղարքունիքի մարզի Լուսակունքի համայնքը ունի գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի հետևյալ հաշվեկշիռը

Հ/Հ	Հողատեսքեր	ընդամենը հա	քաղաք. սեփ.	համայնք. սեփակ.
1.	Վարելահող	536.83	481.93	54.96
2.	Խոտհարք	3.18		3.18
3.	Արոտավայր	96.66		96.66
4.	Գյուղ. այլ	198.17		198.19
Ընդամենը		834.9	481.93	352.97

Տնամերձեր

153.56

Համայնքային 54.96 հա վարելահողերից օգտագործվում է 50.0 հա, որի տարեկան վարձավճարը կազմում է 258.4 հազ. դրամ, իսկ 96.66 հա արոտավայրերը օգտագործվում են ամբողջությամբ 63.0 հազար դրամ վարձավճարով: Վարելահողերը և արոտավայրերը օգտագործվում են առանց վարձակալության պայմանագրի: 2009թ. վարելահողերի պլանային 258.4 հազար դրամի դիմաց մուտքային մասը կազմել է 200.4 հազար դրամ կամ 77.5%, 2010թ. համապատասխանաբար 83.4%, իսկ 2011թ. 01.04. դրությամբ 8.9%, /տեղեկություններ հողօգտագործման մասին կցվում է/:

Վարձավճարի մասով ապառքները կազմում են 370 հազար դրամ /ներառյալ արոտավարձը/:

Հողի հարկի մասով`

Հարկատեսակ	2009թ.			2010թ.			2011թ.		
	պլան	փաս- տացի	%	պլան	փաս- տացի	%	պլան	փաս- տացի	%
Հողի հարկ	887.5			887.5			887.5		
Ապառք	1000			1000			1769.9		
Ընդամենը	1887.5	2409.8	127.7	1887.5	2162.6	114.6	2657.4	836.5	31.5

Հողի հարկի բազայի ելակետային ցուցանիշները կազմում են 1037.2 հազար դրամ, սակայն բյուջեում ամրագրված է 887.5 հազար դրամ: 2009 թ. հողի հարկի մասին պլանային ցուցանիշը կազմել է 127.7%, 2010թ. 114.6%, իսկ առ 01.04.2011թ. դրությամբ 31.5%: Ցուցանիշները ներկայացված են աղյուսակում:

Համայնքում հողի հարկի մասով ապառքները կազմում են 16252.0 հազար դրամ, որից տույժեր 7644.1 հազար դրամ:

Լուսակունքի համանքում 2009-2011թթ. ինչպես գյուղատնտեսական, այնպես էլ բնակավայրի հողատեսքերի օտարումներ չեն կատարվել:

Ապօրինի հողօգտագործման վերաբերյալ համայնքում միջոցներ ձեռք չեն առնվել: Վարձակալած մրցույթին հայտարարություն չի տրվել:

Հողօգտագործումը կատարվում է հողային օրենսգրքի 76-80-րդ հոդվածների պահանջների խախտումներով:

5. Համայնքի ղեկավարի գործունեությունը ֆինանսների բնագավառում

Լուսակունքի համայնքում, նախորդ 3-4 տարիներին, 2005-2008թթ. արձանագրվել են սեփական եկամուտների հավաքագրման 17.4-ից 36.6% կատարողական բնութագրող ցուցանիշներ, ընդ որում՝ սեփական եկամուտներ կազմող բոլոր հարկատեսակների գծով, ինչը 2-3 անգամ նույնիսկ զիջում է մարզի միջին մակարդակը: Նորընտիր համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից ձեռնարկված միջոցների արդյունքում միանգամայն փոխվել է պատկերը. 2009թ. սեփական եկամուտների կատարողականն ապահովվել է 114.0%-ով, 2010թ. կատարողականը՝ 123%-ով, 2011թ. 1-ին եռամսյակինը՝ 28.3 %-ով, որոնք գերազանցել են մարզի համապատասխան ժամանակաշրջանների 101.6, 98.4 և 18.4% ցուցանիշները: Որոշակի աշխատանքներ են տարվել հողի հարկի և գույքահարկի գծով ապառքները կրճատելու, աշխատավարձի և սոցվճարի հողվածներով եղած նախորդ տարիների պարտքերը իսպառ վերացնելու /2009թ./ ուղղությամբ:

Բերենք 2009-2011թ. և 2011թ. 1-ին եռամսյակի համայնքի բյուջեների կատարման վերաբերյալ հաշվետվական տվյալները.

Եկամուտները	2009թ.			2010թ.			2011թ.		
	պլան	փաստացի	%	պլան	փաստացի	%	պլան	փաստացի առ1.04.11թ.	%
Գույքահարկ	900.8	964.9	107.2	742.0	1237.7	166.8	942.0	198.9	21.1
Հողի հարկ	1887.8	2409.8	128.1	1887.5	2162.6	114.6	2655.4	836.5	31.5
Տեղական տուրքեր	112.0	90.0	80.4	56.0	55.7	100.0	84.0	24.6	29.3
Հողի վարձավճար	321.4	200.4	62.1	321.4	215.6	67.1	442.4	39.4	8.9
Վարչակ. գանձում.	-	-	-	-	-	-	-	69.2	-
Ընդ. սեփ. եկամուտներ	3222.0	3665.1	114.0	3006.9	3699.2	123.0	4123.8	1168.8	28.3
Պատ. լիազորույթ.	729.6	729.6	100.0	729.6	600.0	82.2	600.0	-	-
Դոտացիա	15464.2	15464.2	100.0	19547.2	19547.2	100.0	20232.2	5058.1	25.0
Ընդամենը եկամուտներ	19303.8	19858.9	102.9	23283.7	23846.4	102.4	24956.0	6226.9	25.1

Արձանագրենք, որ սեփական եկամուտների կատարման բարձր տոկոսը հիմնականում ապահովվել է ի հաշիվ հողի հարկի և գույքահարկի ավել մուտքերի: Ինչ վերաբերում է տեղական տուրքերին և հողերի վարձավճարներին, ապա այդ հարկատեսակների գծով շարունակաբար տեղիք են տրվել ապառքների ավելացման:

Համայնքում սեփականաշնորհված 481.93 հա վարելահողերի համար հաշվարկվում է 773.5 հ/դրամ հողի հարկ /1 հա-ն 1605 դրամով/, իսկ 153.56 հա տնամերձ հողամասերի համար՝ 264.0 հ/դրամ /1 հա-ն 1695 դրամով/ կամ հողի հարկի գծով տարեկան հաշվարկային գումարը կազմում է 1037.5 հ/դրամ, սակայն 2009-2011թթ. վարչական բյուջեների եկամուտները սահմանելիս, այդ հարկատեսակը ցույց է տրվել 887.5 հ/դրամ կամ տարեկան 150.0 հ/դրամով պակաս: Հանձնարարվեց 2011թ. վարչական բյուջեի եկամուտներում կատարել համապատասխան ճշտումներ և դոտացիայի հաշվարկների համար պահանջվող բազային տվյալներում արտացոլել այդ փոփոխությունը:

Հողի հարկի բազան համայնք է փոխադրվել 2009թ. սեպտեմբերին, երբ հարկային մարմնի կողմից այդ հարկատեսակի գծով ապառքը ցույց է տրվել ~~11085.2~~ **11085.2** հազար դրամ, իսկ դրանց նկատմամբ հաշվարկված տույժերը՝ ~~2627.0~~ **2627.0** հ/դրամ /երկուսը միասին՝ **20712.2** հ/դրամ/: Հողի հարկի բազան ճշգրտելու, ապառքները գանձելու շնորհիվ, ~~2011թ. ապրիլի 1-ի~~ **2011թ. ապրիլի 1-ի** դրությամբ ապառքները նվազել և կազմել են 6449.6 հ/դրամ, իսկ տույժերը՝ 7529.3 հ/դրամ /երկուսը միասին՝ ~~13978.9~~ **13978.9** հ/դրամ/: Որպես բացթողում, նշենք, որ 2009-2011թթ. ժամանակացույցերը կազմելիս, վարչական բյուջեներում ներառվել են միայն հողի հարկի գծով ապառքները կամ շրջանցվել են տույժերի գումարները: Նույնը նաև գույքահարկի դեպքում: Նշենք նաև այն, որ 2009թ. սեպտեմբերին, երբ հողի հարկի բազան փոխադրվել է համայնք, ՏՀՏ-ի կողմից ներկայացված ցուցակներում, որպես հողի հարկի պարտքատերեր, բազայում ներառված են թվով 28 ֆիզիկական անձիք, 749.3 հ/դրամ պարտքերով /որից հողի հարկ՝ 451.7 հ/դրամ և տույժ՝ 297.6 հ/դրամ/, որոնք գրանցված չեն Լուսակունքի համայնքում /ցուցակը կցվում է/:

<<Հողի հարկի արտոնություններ տրամադրելու մասին>> 2009թ. ապրիլի 20-ի ՀՀ օրենքով 135 հողի հարկ վճարողներ ազատվել են հաշվարկված և չվճարված տույժերից, գումարով 1900.0 հ/դրամ, ինչը ցույց է տրված մարզպետարան ներկայացված հաշվետվություններում:

Գույքահարկի բազան համայնք է փոխադրվել 2006թ. նոյեմբերին: 2008թ. հունվարի 1-ի դրությամբ մարզպետարան ներկայացված հաշվետվությունում այդ հարկատեսակի գծով ապառքը ցույց է տրված 2862.9 հ/դրամ, տույժերը՝ 1245.6 ~~հ/դրամ /երկուսը միասին՝ 4108.5~~ **4108.5** հ/դրամ/: 2011թ. ապրիլի 1-ի դրությամբ ապառքը ցույց է տրված ~~2862.9~~ **2862.9** հ/դրամ, տույժերը՝ ~~1245.6~~ **979.1** հ/դրամ: Փոխադրամիջոցները հաշվառող և գրանցող մարմնի կողմից գյուղապետարան ուղարկված ցուցակում, ըստ գյուղապետի և այլ մասնագետների, կան այնպիսիները, որոնք օտարված են կամ ֆիզիկապես ու բարոյապես մաշված են, իրականում գոյություն չունեն և դրանց համար հաշվարկված 2657.6 հ/դրամ գույքահարկը վերածվել է անհուսալի պարտքերի /ցուցակը կցվում է/: Հանձնարարվեց՝ աշխատանքներ տանել փոխադրամիջոցների նախկին տերերի հետ, դրանք գրանցող և հաշվառող (MPY) մարմնի միջոցով ճշտել ցուցակները, լուծել անհուսալի ապառքների լիկվիդացման հարցը:

Միջոցներ ձեռնարկել նաև տեղական տուրքերի և հողի հարկի վարձավճարների գծով առաջացած ապառքների գանձման ուղղությամբ, հողօգտագործող վարձակալների հետ կապել սահմանված պայմանագրեր:

Համայնքի ավագանու 2009-2011թ. նիստերի տարբեր որոշումներով հաստատվել են համայնքի ղեկավարի աշխատակազմի և ենթակառուցվածքների հաստիքացուցակներն ու դրույքաչափերը /15-ից 21 միավոր, տարեկան 10200.0-ից համներով 14784.0 հ/դրամ աշխատավարձի ֆոնդով/: Հաստատվել են նաև խորհրդականի և օգնականի հաստիքային միավորներ: Միաժամանակ, հաստիքացուցակներով նախատեսվել, հաստատվել և պահվել է 1 միավոր անասնաբույժի հաստիք, 2009-2010թթ. ամսական 36.0 հ/դրամ, իսկ 2011թ.՝ 39.0 հգ.դրամ աշխատավարձով: Անասնաբույժի հաստիքը որպես պետության կողմից պատվիրակված լիազորություն, ՀՀ պետբյուջեում առանձին հողվածով նախատեսվում և ֆինանսավորվում է ուստի նպատակահարմար չէր լրացուցիչ

անասնաբույժի հաստիք պահելու: Նրան 2009-2010թթ. և 2011թ. 1-ին եռամսյակում փաստացի վճարվել է 981.0 հ/դրամ աշխատավարձ:

Համայնքում 2009թ. ընթացքում վճարվել են աշխատավարձի նախորդ տարիների պարտքերը 3205.6 հ/դրամ, սոցվճարներ՝ 90.0 հ/դրամ գումարով և մարզպետարան ներկայացվող հաշվետվություններում, այդուհետ, ցույց են տրվել, որ ապառքներ այլևս չունեն: Այդ պարտքերը վճարելու համար հիմք են հանդիսացել <<Քյավառ աուդիտի>> կողմից 18.04.2006թ. թիվ 003 գործով կազմած ակտում բերված տեղեկանքը: Չնայած դրան, 2010թ. ապրիլի թիվ 9 վճարման տեղեկագրով նախկին գրադարանավար Կարինե Առաքելյանին, Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 31.03.2010թ. վճռով, 2001թ. օգոստոս-դեկտեմբեր ամիսների և 2002-2003թթ /ընդամենը 29 ամիս/ աշխատավարձերի հաշվարկներից ելնելով, վճարվել է 260.2 հ/դրամ նախորդ տարիների աշխատավարձերի պարտքեր:

Համայնքի 2009թ. բյուջեով նախատեսված 19415.8 հազ. դրամ ծախսերի դիմաց փաստացի ծախսերը կազմել են 18838.9 հազ. դրամ կամ փաստացի ծախսերը կատարվել են 97.0%-ով: 2010թ.՝ 24383.7 հ/դրամի դիմաց՝ 22424.0 հ/դրամ /90.3%/ և 2011թ.՝ 24956.0 հազ. դրամի դիմաց՝ 6400,1 հ/դրամ /25.6%/: Ընդ որում, աշխատավարձի և սոցվճարի հոդվածներով ծախսերը փաստացի բյուջետային ծախսերում կազմել են՝ 2009թ.՝ 84.0 %, 2010թ.՝ 76.5% և 2011թ. 1-ին եռամսյակում՝ 84.0%: Մնացած հոդվածներով ծախսերը կատարվել են 88.0-ից 770.0 հ/դրամի շրջանակում: Այդ թվում՝ 4729 <<Այլ նպատակներ բյուջեից>> հոդվածով սակավ ապահովված ընտանիքներին, որպես ֆինանսական օգնություն, ավագանու որոշումներով տրվել են՝ 2009թ. 190.0 հ/դրամ, 2010թ.՝ 500.0 հ/դրամ և 2011թ. 1-ին եռամսյակում՝ 270.0 հ/դրամ գումարներ:

Տրանսպորտի վարձակալության նպատակով ծախսերը /հոդված 4216/ 2009թ. կազմել են 200.0 հ/դրամ, 2010թ.՝ 600.0 հ/դրամ և 2011թ. 1-ին եռամսյակում՝ 150.0 հ/դրամ: 2009թ., 4657 <<Այլ կապիտալ դրամաշնորհներ>> հոդվածով ծախսվել է 625.6 հ/դրամ, որը փոխանցվել է <<Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակին>>, համաձայն 01.06.2009թ. համաձայնագրի, որպես համայնքային ներդրում /համայնքում կառուցված ամբուլատորիայի դիմաց, որի նախահաշվային արժեքը կազմել է 35510.0 հ/դրամ/:

2009-2010թթ. 4239 <<Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ>> հոդվածով, համայնքում Մարտի 8-ի, Մայիսի 9-ի և Տարեմուտի միջոցառումների նպատակով ծախսվել է 700.0 հ/դրամ գումար:

Ֆոնդային բյուջեի միջոցների հաշվին 2009թ. իրականացվել են ընդամենը 376.0 հ/դրամ ծախսեր, որից՝

ա/ 5113 <<Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում>> հոդվածով, դատարանի վճռով, 99.0 հ/դրամ է փոխանցվել <<Վարդասար>> ՍՊԸ-ին, որպես պարտքի վճարում և բ/ 5112 <<Վարչական սարքավորումներ>> հոդվածով 275.0 հ/դրամ է փոխանցվել <<Մանվել>> Ա/Ձ-ին՝ ձեռք բերված 2 բազկաթոռների, 10 աթոռների և լուստրայի դիմաց, որոնք գրանցված էին գույքամատյանում:

2010թ. ֆոնդային բյուջեից ծախսը կազմել է 920.0 հ/դրամ, որից՝ ա/ 5122 <<Վարչական սարքավորումներ>> հոդվածով կատարված 220.0 հ/դրամով,

համաձայն 14.01.2010թ. թիվ 6 պայմանագրի, <<Ալեն-Լիկա>> ՍՊԸ-ից ձեռք է բերվել 1 հատ համակարգիչ /գրանցված էր/: Կային գանձապետական համապատասխան փաստաթղթեր, ք/ 5112 <<շենքերի և շինությունների շինարարություն>> հողվածով, համաձայն <<Գագիկ-Արմեն>> ՍՊԸ-ի հետ կնքված 4.11.2009թ. պայմանագրի համայնքի Արևելյան թաղամասում իրականացված գազաֆիկացման-շինհավաքակցման աշխատանքների համար, վճարվել է 700.0 հ/դրամ:

2011թ. 1-ին եռամսյակում ֆոնդային բյուջեով ծախսվել է 1337.0 հ/դրամ: <<Վարդենիս>> ԶՕԸ-ի հետ 10.10.2009թ. կնքված պայմանագրի համաձայն, ՀՄՀ-ի կողմից համայնքում իրականացվող ոռոգման համակարգի վերանորոգման աշխատանքների նպատակով, որի նախահաշվային արժեքը կազմում է 34713.0 հ/դրամ, որպես համաֆինանսավորում համայնքը պետք է վճարի ընդամենը 5206.9 հ/դրամ, որից 16.03.2011թ. թիվ 1 վճարման հանձնարարագրով <<Վարդենիս>> ԶՕԸ-ին է փոխանցվել 1337.0 հ/դրամ:

Նշենք, որ չնայած 2010-2011թթ. հաստիքային ցուցակներով նախատեսվել է 1 միավոր, 65.0 հ/դրամ ամսական աշխատավարձով, գլխավոր մասնագետի /հաշվապահ/ համարիչ, սակայն 2010թ. ապրիլի 1-ից մինչ օրս այն թափուր է և հաշվապահական աշխատանքները իրականացվում են /որոշ թերություններով/ այլ աշխատողների, հատկապես գլխավոր ֆինանսիստի կողմից:

Համայնքում գնումներն իրականացվում են <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի պահանջների որոշ խախտումներով:

Ե Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Առաջարկել մարզի Լուսակունք համայնքի ղեկավարին՝






1. պահպանել համայնքի ավագանու նիստերի գումարման <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքով սահմանված պարբերականությունը.
2. ՀՀ <<ՏԻՄ>> օրենքի 30-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջի համաձայն յոթնօրյա ժամկետում մարզպետարան առաքել համայնքի ավագանու որոշումները.
3. տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող նորմատիվ իրավական ակտերը <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի պահանջների համապատասխան ենթարկել պետական գրանցման.
4. քննարկել համայնքի ղեկավարի աշխատակազմի գլխավոր մասնագետի թափուր պաշտոնի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկից հանելու կամ կրտսեր պաշտոնների խմբում ընդգրկելու նպատակահարմարության հարցը.
5. մշակել, ավագանու նիստում հաստատել, պետական գրանցումից հետո գործողություն մեջ դնել առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության համակարգման ներհամայնքային կանոնները.
6. համայնքային սեփականության հողատեսքերի վարձակալության համար տալ հայտարարություններ, իսկ վարձակալությունները իրականացնել ՀՀ

հողային օրենսգրքի 76-80-րդ հոդվածների պահանջներին համապատասխան.

7. հաշվապահական հաշվառումն իրականացնել <<Հաշվապահական հաշվառման մասին>> ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան.
8. միջոցներ ձեռնարկել գնումների մասով տեղ գտած որոշակի թերությունների վերացման ուղղությամբ:

Առաջարկություն – առաջարկվում է տեղեկանքը քննարկել մարզպետի նիստում, նախապատրաստել մարզպետի որոշման նախագիծ, որով առաջարկել համայնքի ղեկավարին քննության առնել արձանագրված թերություններն ու բացթողումները և միջոցներ ձեռնարկել դրանց վերացման ուղղությամբ:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ՝

	Ի. ԱՍՏՐՅԱՆ
ՅՄ. ԲՄ	ՅՈՒ. ԹԱԹԱՐՅԱՆ
	Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ
	Տ. ՕՍԿԱՆՅԱՆ
	Վ. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ
	Վ. ԴՈՂՈՍՅԱՆ